

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Մ Ա Ն

28 դեկտեմբերի 2006 թվականի N 1909-Ն

151 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՄԱ- ՅԻՍԻ 26-Ի N 954-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 26-ի «Հայկական կոնյակների և հայկական կոնյակի սպիրտների տեխնիկական կանոնա-
կարգը հաստատելու մասին» N 954-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխություն-
ները և լրացումը՝

որոշմամբ հաստատված կանոնակարգի՝

ա) 34-րդ կետից հանել «բ» ենթակետը,

բ) 36-րդ կետի առաջին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Փաստաթղթերի փորձաքննության դրական արդյունքից հետո շաղցված, ակցի-
զային դրոշմանիշերով դրոշմավորված հայկական կոնյակից տեսչության կողմից վերց-
վում են փորձանմուշներ, որոնք փորձարկման են տրվում հայկական կոնյակի արտա-
դրությամբ և (կամ) իրացմամբ չզբաղվող հավատարմագրված փորձարկման լաբորա-
տորիա: Փորձանմուշների ընտրությունը և դրանց փորձարկումներն իրականացվում են
հայտատուի հաշվին».

գ) 37-րդ կետի առաջին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Սույն տեխնիկական կանոնակարգի 32-34-րդ կետերով նախատեսված փաս-
տաթղթերի փորձաքննության, 36-րդ կետով նախատեսված հայկական կոնյակի յուրա-
քանչյուր անվանատեսակի փորձարկման արձանագրության մեջ ներկայացված ցուցա-
նիշների և նույն անվանատեսակի հայկական կոնյակի կուպաժավորման ավարտից հե-
տո վերցված փորձանմուշի փորձարկման արձանագրության մեջ նշված ցուցանիշների
համապատասխանության և 32-րդ կետով նախատեսված մթերման փաստաթղթերի առ-
կայության դեպքերում պետք է կազմվի հայկական կոնյակի իսկության վկայականի
տրամադրման վերաբերյալ համապատասխանության եզրակացություն».

դ) N 2 ձևը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 11-րդ սյունակով.

«Ակցիզային դրոշմանիշերի համարները»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2007 թվականի հունվարի 26-ից:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ

Ա. Մարգարյան